ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/62

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ
Բողոք բերող՝ «Ֆոտոն» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Նարվակի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հարությունյանի
«Նարվակի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Հովհաննիսյանի, Ս. Մեհրաբյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, գրասենյակային գույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 13.04.2022թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- չեղյալ համարել 07.04.2022թ.-ի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության արդյունքում կայացված 1-ին չափաբաժնի մասով «Նարվակի» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի մասով «Առնատար» ՍՊԸ-ին և 4-րդ չափաբաժնի մասով «Գուրգեն Քարտալյան» Ա/Ձ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչելու մասին որոշումները,

- 11.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը վերը նշված չափաբաժինների մասով,

- ընդունել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 13.04.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 14.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/62 համարի ծածկագիրը:

27.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 27.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. **<u>«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 13.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Դատական դեպարտամենտի կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով 2022-03-28 հրապարակել է ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով ընթացակարգ:

Ընթացակարգը իրականացվել է էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով՝ որն իրականացվում է eauction.armeps.am համակարգի միջոցով:

ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.2 կետով նշվել է, որ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2022.04.06. 10:00-ին:

Ֆոտոն ՍՊԸ-ն ունենալով բազմյա փորձ նաև էլեկտրոնային աճուրդներին մասնակցելու մասով հրավերով նշված ժամին սկսում է մասնակցել աճուրդին:

Աճուրդը տեղի է ունեցել հետևյալ ներքոնշյալ ձևով.

1-ին չափաբաժին.

Ջուզեպպե ՍՊԸ	7223040 AMD	2022-04-06 10:01:00
ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ	7150000 AMD	2022-04-06 10:03:49
Ջուզեպպե ՍՊԸ	6900000 AMD	2022-04-06 10:04:04
ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ	6827000 AMD	2022-04-06 10:05:18
Ջուզեպպե ՍՊԸ	6600000 AMD	2022-04-06 10:05:59
Ֆոտոն ՍՊԸ	6500000 AMD	2022-04-06 10:09:57
ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ	6427000 AMD	2022-04-06 10:11:05
Ֆոտոն ՍՊԸ	6354000 AMD	2022-04-06 10:14:06

2-րդ չափաբաժին.

Ջուզեպպե ՍՊԸ	5742000 AMD	2022-04-06 10:01:11
ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ	5684000 AMD	2022-04-06 10:04:27
Ջուզեպպե ՍՊԸ	5300000 AMD	2022-04-06 10:04:51
Ֆոտոն ՍՊԸ	5200000 AMD	2022-04-06 10:08:35
Ֆոտոն ՍՊԸ	5140000 AMD	2022-04-06 10:13:06

3-րդ չափաբաժին.

Ջուզեպպե ՍՊԸ	253440 AMD	2022-04-06 10:02:09
Ֆոտոն ՍՊԸ	250000 AMD	2022-04-06 10:06:25
ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ	247440 AMD	2022-04-06 10:10:58
Ֆոտոն ՍՊԸ	240000 AMD	2022-04-06 10:14:40

4-րդ չափաբաժին.

Ջուզեպպե ՍՊԸ	912384 AMD	2022-04-06 10:01:25
ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ	903168 AMD	2022-04-06 10:02:36
Ջուզեպպե ՍՊԸ	850000 AMD	2022-04-06 10:04:16
Գուրգեն Քարտալյան ԱՁ	840784 AMD	2022-04-06 10:05:22
Ջուզեպպե ՍՊԸ	790000 AMD	2022-04-06 10:06:13
Ֆոտոն ՍՊԸ	780000 AMD	2022-04-06 10:10:16
Գուրգեն Քարտալյան ԱՁ	770784 AMD	2022-04-06 10:14:38

Վերոնշյալ գնային առաջարկները կարող եք տեսնել նաև https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/17423/code/1LTUtC3Ut9Sx1YPUsdWK1YHUsi0yMi8xMw==/ հղմամբ:

Սակայն վերը նշված աղյուսակներում արտացոլված չէ այն, ինչ տեղի է ունեցել իրականում: Աճուրդի ժամանակ երբ որ Ֆոտոն ՍՊԸ փորձում էր կատարել գների նվազեցում և դեռ դրա համար բավարար ժամանակ կար, աճուրդը հանկարծակի համարվում է ավարտված և Ֆոտոն ՍՊԸ հնարավորություն չի ունենում նվազեցնելու գինը:

07.04.2022թ. գնահատող հանձնաժողովի նիստի N 2 արձանագրության համաձայն ընթացակարգին մասնակցել են 9 մասնակից:

Արդյունքում 1-ին չաձաբաժնի մասով Նարվակի ՍՊԸ, 3-րդ չափաբաժնի մասով Առնատար և 4-րդ չափաբաժնի մասով Գուրգեն Քարտալյան ԱՁ ճանաչվել են առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ, որի վերաբերյալ 2022-04-11 www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով նույն կայքում հրապարակվել է գնման ընթացակարգը այդ չափաբաժնի մասով չկայացած լինելու վերաբերյալ հայտարարություն:

Գտնում ենք, որ վերոնշյալ աճուրդի խափանումներով աշխատելու պատճառով խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով և 7-րդ մասով սահմանված պահանջները և հրավերի 8-րդ կետով սահմանված պայմանները, այն է՝

8.1 Սույն հրավերով սահմանված՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին և գնահատող հանձնաժողովի բոլոր անդամներին միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարի, ըստ չափաբաժինների էլեկտրոնային աճուրդը սկսելու օրը և ժամը, ինչպես նաև օգտագործվող էլեկտրոնային սար¬քա¬վո¬րումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալները: Եթե սույն ընթացակարգը բողոքարկվել է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը և առկա չէ ընթացակարգի կասեցումը հանելու մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշում, ապա սույն կետով նախատեսված տեղեկատվությունը համակարգը մասնակիցներին ուղարկում է բողոքի վերաբերյալ կայացված որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Ընդ որում անկախ ընթացակարգը կասեցված լինելու հանգամանքից, մասնակիցներն ունեն մինչև սույն հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը հայտեր ներկայացնելու, ներկայացված հայտերը փոխելու կամ հետ վերցնելու հնարավորություն:

8.2 Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2022.04.06. 10:00-ին: Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

8.3 Գնման ընթացակարգը վեց չափաբաժնից ավելի լինելու դեպքում էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը վեց չափաբաժնի համար: Վեցից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող վեց չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

8.4 Աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին այդ չափաբաժնի մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Ընդ որում նվազեցվող գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով: Այն մասնակիցները, որոնք տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարեն ավելացված արժեքի հարկ, նվազեցվող գները ներկայացնում են առանց այդ հարկի գումարի հաշվարկման: Եթե տվյալ չափաբաժնի գծով աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում (30 րոպե) որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա 5-րդ րոպեն լրանալու պահի դրությամբ աճուրդը տվյալ չափաբաժնի մասով համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

8.5 Մինչև աճուրդի ամփոփման համար սույն հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

8.6 Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելուց անմիջապես հետո համակարգի հրապարակային էջի "Հայտեր բաժնում" ավտոմատ եղանակով հրապարակվում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի համար սույն ընթացակարգի

շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, աճուրդի արդյունքում ըստ չափաբաժինների որոշված ինչպես առաջին տեղը զբաղեցրած, այնպես էլ մյուս մասնակիցների անվա¬նումներն ու վերջիններիս կողմից ինչպես հայտով, այնպես էլ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ ներկայացված գներն ու հայտով ներկայացված փաստաթղթերը: Համակարգը սույն կետով նախատեսված տեղեկատվությունը միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է գնահատող հանձնաժողովի անդամներին, քարտուղարին և հայտեր ներկայացրած մասնակիցներին:

8.7 Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերա¬զանցում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, գնման ընթացակարգի տվյալ չափաբաժինը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- չեղյալ համարել 07.04.2022թ.-ի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության արդյունքում կայացված 1-ին չափաբաժնի մասով «Նարվակի» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի մասով «Առնատար» ՍՊԸ-ին և 4-րդ չափաբաժնի մասով «Գուրգեն Քարտալյան» Ա/Ձ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչելու մասին որոշումները,

- 11.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը վերը նշված չափաբաժինների մասով,

- ընդունել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշում:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6519-2022 գրությամբ դիմել է ՀՀ դատական դեպարտամենտին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

4. <u>Երրորդ անձ՝ «Նարվակի» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Նարվակի» ՍՊԸ-ն, 27.04.2022թ.-ին ներկայացված միջնորդությամբ ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր անդրադարձ կատարելով բողոքով ներկայացված հիմքերին ու հիմնավորումներին:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 05.04.2022թ.-ին ժամը 10:00-ն ներառյալ, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 06.04.2022թ.-ին ժամը 10:00-ին:

iv. «Ֆոտոն» ՍՊԸ-ն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ դատական դեպարտամենտի կողմից «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով

հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ 1-ից 4-րդ չափաբաժինների մասով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել է, քանի որ Ընկերության կողմից վերոնշյալ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում են նախահաշվային գները:

vi. Բողոքներ քննող անձը 28.04.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/9084-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել դիրքորոշում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված հարցերի վերաբերյալ:

vii. Ի պատասխան վերոնշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.05.2022թ.-ի ներկայացրած թիվ Ն/26/9457-2022 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 06.04.2022թ.-ին ժամը 10:00-ից մինչև ժամը 10:30-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդների համակարգում խափանումներ չեն գրանցվել, իսկ գրությամբ ներկայացված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդն ընթացել է առանց խոչընդոտների:

ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է նաև, որ հիշյալ հակադարձ աճուրդի վերջին գնառաջարկները ներկայացնելու պահից՝ ժամը 10:13:06, 10:14:06, 10:14:38 և 10:14:40-ից հետո ժամը 10:13:55 , 10:16:44, 10:18:27, 10:22:39, 10:26:56 և 10:29:57-ին համակարգում հնարավոր է եղել տրամադրել նոր գնառաջարկներ, ինչպես դա իրականացվել է «ԷԱՃԾՁԲ-2022/5-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի աճուրդի ընթացքում, որի մասին տեղեկատվությունն առկա է համակարգի հանրային բաժնում (հանրային բաժնի արտատպվածքը կցվում է):

Միաժամանակ տեղեկացրել են, որ համակարգում իրականացվող աճուրդային գործընթացները ժամանակի կոնկրետ հատվածների համար ընթանում եմ ավտոմատ եղանակով և խնդիր առաջանալու դեպքում այն տարածվում է բոլոր աճուրդների վրա:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները հաշվի առնելով, որ հրավերով նախատեսվում է

նաև, որ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.12.2021թ.-ին ժամը 11:00-ին:

Հրավերի 8.3-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը վեց չափաբաժնից ավելի լինելու դեպքում էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը վեց չափաբաժնի համար: Վեցից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող վեց չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ հրավերով սահմանվում է, որ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին: Աճուրդի ընդհանուր տևողությունը պետք է լինի 30 րոպե: Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին

ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել նաև, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է, ապա գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ընթացակարգի շրջանակներում պայմանագիր չկնքելու հիմքով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ

իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով 1-ից 4-րդ չափաբաժինների մասով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել է, քանի որ Ընկերության կողմից վերոնշյալ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում են նախահաշվային գները: Բողոքներ քննող անձը 28.04.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/9084-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել դիրքորոշում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված հարցերի վերաբերյալ: Ի պատասխան վերոնշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.05.2022թ.-ի ներկայացրած թիվ Ն/26/9457-2022 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 06.04.2022թ.-ին ժամը 10:00-ից մինչև ժամը 10:30-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային

աճուրդների համակարգում խափանումներ չեն գրանցվել, իսկ գրությամբ ներկայացված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդն ընթացել է առանց խոչընդոտների: ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է նաև, որ հիշյալ հակադարձ աճուրդի վերջին գնառաջարկները ներկայացնելու պահից՝ ժամը 10:13:06, 10:14:06, 10:14:38 և 10:14:40-ից հետո ժամը 10:13:55 , 10:16:44, 10:18:27, 10:22:39, 10:26:56 և 10:29:57-ին համակարգում հնարավոր է եղել տրամադրել նոր գնառաջարկներ, ինչպես դա իրականացվել է «ԷԱՃԾՁԲ-2022/5-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի աճուրդի ընթացքում, որի մասին տեղեկատվությունն առկա է համակարգի հանրային բաժնում (հանրային բաժնի արտատպվածքը կցվում է): Միաժամանակ տեղեկացրել են, որ համակարգում իրականացվող աճուրդային գործընթացները ժամանակի կոնկրետ հատվածների համար ընթանում եմ ավտոմատ եղանակով և խնդիր առաջանալու դեպքում այն տարածվում է բոլոր աճուրդների վրա:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել և իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված պահանջներին համապատասխան, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրությամբ և պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները ենթակա չեն չեղարկման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերը անհիմն են, ուստի Ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման ամբողջությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/62 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**